ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

Ընդհանուր եւ արտաքին կապերի բաժին

N 11054 17 NOV 2017 11.30

Կից □ Դեղի կարգավիճակ______

Նշումներ______

16 նոյեմբերի 2017թ No 3295-Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 25-ի N 347 որոշման 18-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N 1300-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 12-րդ կետի «դ» ենթակետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի N 0103194317 առ 30.10.2017թ. գրությունը և դեղի պարզ ընթացակարգով կատարված փորձագիտական եզրակացությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Գրանցել երաշխավորված թվով 2 դեղերը՝ համաձայն հավելվածի:

2. «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Հ. Թոփչյանին՝

1) հնգօրյա ժամկետում ապահովել դեղերի գրանցման հավաստագրերի ներկայացումը ՀՀ առողջապահության նախարարություն.

2) սահմանված ժամկետում ապահովել սույն հրամանի 1-ին կետում նշված դեղերի գրանցման հավաստագրերի տրամադրումը հայտատուներին՝ որպես հավաստագրի ուժի մեջ մտնելու ժամկետ նշելով սույն հրամանի տրման օրը.

3) մինչև յուրաքանչյուր ամսվա 5-ը ՀՀ դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում) ներառելու նպատակով ՀՀ առողջապահության նախարարություն ներկայացնել նախորդ ամսվա ընթացքում պետական գրանցում ստացած դեղերի ցանկը:

Ամս. 17.11.17 ժ. 10⁰⁰

/ ԼԵՎՈՆ ԱԼԹՈՒՆՅԱՆ

Հավելված
ՀՀ առողջապահության նախարարի
2017 թվականի նոյեմբերի 16 - ի
N 3295 – Ա հրամանի

Պարզ ընթացակարգով կատարված փորձաքննության եզրակացության հավելված

| h/h | Առևտրային անվանումը | միջազգային չպատենտավորված (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումները | դեղաձևը | դեղաչափը և թողարկման ձևը (փաթեթավորումը) | արտադրող ֆիրման | արտադրող երկիրը | գրանցման հավաստագրի իրավատերը | բացթողման կարգը | եզրակացու-թյան համարը և ամսաթիվը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Օտիպաքս | ֆենազոն, լիդոկային (լիդոկայինի հիդրոքլորիդ) | ականջակաթիլներ | 40մգ/գ+10մգ/գ; 15մլ(16գ) ապակե սրվակ և կաթոցիկ | Բիոկոդեքս,1 ավենյու Բլեզ Պասկալ, 60000 Բովե | Ֆրանսիա | Բիոկոդեքս, 7 ավենյու Գալիենի 94250 Ժանտիլի, Ֆրանսիա | ԱԴ | 17125 26.10.2017 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2. | Պիրացետամ | պիրացետամ | լուծույթ մ/մ և ն/ե ներարկման | 200մգ/մլ; (10/2x5/) ամպուլներ 5մլ բլիստերում | Ֆարմստանդարտ - ՈւֆաՎԻՏԱ ԲԲԸ, 450077, ք. Ուֆա, փ. Խուդայբերդինի 28 | Ռուսաստան | Ֆարմստանդարտ-ՈւֆաՎԻՏԱ ԲԲԸ, 450077, ք. Ուֆա, փ. Խուդայբերդինի 28, Ռուսաստան | Դ | 17126 26.10.2017 |